ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 2

ԿԻՐԱՌԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏ

29 սեպտեմբերի 2016թ. ք.Իջևան

Նախագահ՝ Ա.Շ.Մարգարյան

Քարտուղար՝ Ք.Հ.Մխիթարյան

Ներկա էին խորհրդի 15 անդամներ:

Օրակարգ

1. 2016-17 ուստարվա առաջին կիսամյակի առաջին ընթացիկ ստուգումների և քննությունների ժամանակացույցի քննարկում և հաստատում:
   /զեկ. Ա.Շ.Մարգարյան /
2. 2015-2016 ուստարվա երկրորդ կիսամյակի քննաշրջանի ամփոփում:
   /զեկ. Ա.Շ.Մարգարյան /
3. Առաջին կուրս ընդունված ուսանողների հետ կապված հարցերի քննարկում:
   /զեկ. Ա.Շ.Մարգարյան /
4. Ընթացիկ հարցեր:

ԼՍԵՑԻՆ - Ֆակուլտետի խորհրդի նիստը բացեց և օրակարգը ներկայացրեց դեկանի ժ/պ, խորհրդի նախագահ Ա.Շ.Մարգարյանը:

Օրակարգը հաստատելուց հետո նիստի մասնակիցները անցան օրակարգի հարցերի քննարկմանը:

Նիստը վարում էր Ա.Շ.Մարգարյանը:

Օրակարգի առաջին հարցի մասին հանդես եկավ խորհրդի նախագահ Ա.Շ.Մարգարյանը: Նա ներկայացրեց 2016-17թթ ուստարվա առաջին կիսամյակի I ընթացիկ քննությունների և ստուգումների գրաֆիկը, որը համապատասխանում է տվյալ մասնագիտության ուսումնական պլաններին:Վերջինս քննարկվել է ամբիոնների նիստերում , յուրաքանչյուր կուրսի ուսանողների հետ և արժանացել է հավանության, ժամկետները որոշվել է ըստ հաստատված ուսումնական գործընթացի ժամանակացույցի և ընդգրկում է VII և VIII շաբաթները:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- „Դեկորատիվ կիրառական արվեստի և դիզայնի” ամբիոն վարիչի ժ/պ Մ.Վ.Հարությունյանը: Նա հավանություն տվեց ներկայացված ժամանակացույցին և առաջարկեց հաստատել 2016-17թթ.

Ուստարվա առաջին կիսամյակի I ընթացիկ քննությունների և ստուգումների գրաֆիկները:

ՈՐՈՇԵՑԻՆ- Հանձնարարել բոլոր դասախոսներին, ընթացիկ քննությունները և ստուգումները անցկացնել ըստ հաստատված ժամանակացույցի, իսկ կատարման վերահսկողությունը դնել մասնագիտության պատասխանատու Ա.Լ.Չիբուխչյանի վրա :

Օրակարգի երկրորդ հարցի մասին զեկուցումով հանդես եկավ ֆակուլտետի խորհրդի նախագահ Ա.Շ.Մարգարյանը: Նա նշեց, որ 2015-2016 ուստարվա երկրորդ կիսամյակից առաջին, երկրորդ և երրորդ կուրսերից թվով 9 ուսանողներ ունեցել են ակադեմիական պարտքեր, որոնցից երկուսը(Հարությունյան Արեն,Ալլաղյան Սարգիս -առաջին կուրս) մեկնել են ազգային բանակ, ուստի նրանց համար հետաձգվել է քննաշրջանը, իսկ մնացածները հանձնել են բոլոր առարկայական պարտքերը և հաստատվել տվյալ կուրսում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Դ.Չիբուխչյանը նշեց, որ հետևողական աշխատանք է տարվել առարկայական պարտքեր ունեցող բոլոր ուսանողների հետ, ինչի արդյունքում մի մասը առաջին լուծարքից հետո, մյուս մասը երկրորդ լուծարքից հետո մարել են իրենց պարտքերը:

ՈՐՈՇԵՑԻՆ- Քննաշրջանի հաշվետվությունը ներկայացնել ուսումնամեթոդական վարչություն:

Օրակարգի երրորդ հարցի վերաբերյալ զեկուցումով հանդես եկավ ֆակուլտետի դեկանի ժ/պ Ա.Մարգարյանը և ներկայացրեց 2016թ. ընդունելության արդյունքները. ,,Դիզայն" մասնագիտությամբ 7 ուսանող և ,, Համակարգչային գրաֆիկա" մասնագիտության 7 ուսանող , որից մեկ ուսանող զորակոչվել է ազգային բանակ:

Զեկուցողը մտահոգություն հայտնեց դիմորդների փոքր թվաքանակի վերաբերյալ և նշեց, որ անհրաժեշտ է հնարավոր բոլոր միջոցները ձեռնարկել հաջորդ տարիներին այն ավելացնելու համար:Մասնավորապես առաջարկվեց կազմակերպել այցելություններ մարզի հանրակրթական դպրոցներ, իրականացնել հանդիպումներ բարձր դասարաններում սովորող աշակերտների և ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական անձնակազմի հետ՝ լուսաբանելով

ուսանողներին տրվող գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձեռք բերման գործընթացը, կազմակերպվող միջոցառումները և ուսանողական կյանքի այլ մանրամասներ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Ա.Չիբուխչյանը նշեց, որ նախորդ տարիներին նմանատիպ այցելություններ ունեցել են Բերդի տարածաշրջանի դպրոցներում , ինչը բավականին դրական արդյունք է տվել:

ՈՐՈՇԵՑԻՆ- Հանձնարարել ամբիոնների վարիչներին և գեղխորհրդի նախագահին կազմավորել հանձնաժողով, որը կիրականացնի վերոնշյալ հանդիպումները:

Օրակարգի չորրորդ հարցի վերաբերյալ Ա.Մարգարյանը ներկայացրեց բոլոր կուրսերում 2014-2015 ուս.տարվա ավարտից հետո ռոտացիայի արդյունքները. „Կիրառական արվեստ՝ ՝մասնագիտության երրորդ կուրսի ուսանող Արման Ալեքսանյանը իր տեղը զիճեց Գարիկ Դալլաքյանին, ,,Դիզայն" մասնագիտության երկրորդ կուրսի ուսանողուհի՝ Անուշ Շահինյանին՝ Ալիտա Շահնազարյանը, իսկ մնացած ուսանողները պահպանել են իրենց կարգավիճակները:

Զեկուցողը նշեց , որ ,, Կիրառական արվեստ" մասնագիտության երկրորդ կուրսի ուսանող Կարեն Գոգինյանը 2013-2014 ուստարվա քննաշրջանի արդյունքով ձեռք է բերել պետության կողմից ուսման վճարի 100% փոխհատուցման իրավունք և մեկնել ազգային բանակ: Վերադառնալուց հետո նշված կուրսում ավելացել է ևս մեկ անվճար տեղ և դարձել երեք:

Կրթաթոշակի նշանակման հարցում ֆակուլտետի կուրսերում բարձր առաջադիմություն և հասարակական ակտիվություն ունեցող ուսանողները 2016-2017 ուստարվա առաջին կիսամյակում կստանան ըստ գործող համապատասխան կարգի: Մրցույթ առաջացել է միայն „Դիզայն'' մասնագիտության երկրորդ և երրոդ կուրսերում, որտեղ մասնաճյուղի և ֆակուլտետի ուսանողական խորհուրդների նախագահների աջակցությամբ որոշվեց առավել արժանի ուսնողների անունները:

ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա.Շ.Մարգարյան

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ք.Հ.Մխիթարյան